ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ info@moj.am

10081305

09.06.2015 N 01/14/6864-15

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջավադյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2015 թվականի հունիսի 3-ի 02/23.18/9412-15 հանձնարարականի՝ կից ներկայացվում է ««Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
МИНИСТЕРСТВО ЮСТИЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
СЕКРЕТАРИАТ

Կատարող՝ Մարգարիտա Կարապետյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 380-227

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1. Օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այսպես՝ նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 39.22-րդ հոդվածի համաձայն՝ պատասխանատու անձը ենթարկվում է պատասխանատվության ֆինանսական հատվածի այն օրենսդրության համաձայն, որով կարգավորվում է պատասխանատու անձի՝ որպես ֆինանսական կազմակերպության գործունեությունը, ինչը չի բխում ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներից, որոնց համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը: Այդ առումով հիշյալ հոդվածում «օրենսդրության» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքի» բառով:

2. Նախագիծը չի համապատասխանում հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթներին: Այսպես՝ նախագծի 6-րդ հոդվածում «ուժի մեջ է մտնում» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «պաշտոնական» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Իրավական ակտում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված չեն: Այսպես՝ նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 39.16-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատասխանատու անձի կողմից կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելը դադարեցնելու վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում տվյալ կազմակերպություններին որպես խումբ որակելը դադարեցնելու վերաբերյալ կամ որոշում է կայացնում մեկ տարին չգերազանցող փորձաշրջան տրամադրելու վերաբերյալ: Այդ առումով պարզ չէ, թե որ դեպքերում և ինչ չափանիշներ հաշվի առնելով է Կենտրոնական բանկը մի դեպքում որոշում կայացնում կազմակերպություններին որպես խումբ որակելը դադարեցնելու, իսկ մեկ այլ դեպքում փորձաշրջան տրամադրելու վերաբերյալ:

Հիշյալ դրույթներում առկա է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կոռուպցիոն գործոն, որը դրսևորվում է որոշակի հանգամանքների առկայության դեպքում պաշտոնատար անձանց սեփական հայեցողությամբ գործելու անհարկի լայն հնարավորություն ընձեռելու միջոցով: Այդ առումով անհրաժեշտ է հստակ սահմանել բոլոր դեպքերը և չափանիշները, որոնք հաշվի առնելով պետք է առաջնորդվի Կենտրոնական բանկի խորհուրդը որոշումներ կայացնելիս:

6. Նախագծում առկա են լրամշակման, հստակեցման և խմբագրման կարիք ունեցող դրույթներ: Այսպես՝

1) նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի

դրույթը հստակեցման կարիք ունի՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:

2) Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ պատասխանատու անձ է համարվում ֆինանսական խմբի անդամ կազմակերպությունների կողմից նշանակված կամ սույն օրենքով սահմանված դեպքում Կենտրոնական բանկի կողմից նշանակված ֆինանսական խմբի անդամ հանդիսացող ֆինանսական կազմակերպությունը, որը կարող է արդյունավետ իրականացնել սույն օրենքով իրեն վերապահված գործառույթները: Շարադրվածից պարզ չէ, թե որն է հանդիսանում պատասխանատու անձ, այն առումով, որ պատասխանատու անձ համարվելու պայմանը կապվում է տվյալ անձի կողմից իրեն վերապահված գործառույթները արդյունավետ իրականացնելու հանգամանքի հետ, ինչը զուտ գնահատողական չափանիշ է, և բացառում է դրա որոշակիությունը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1) նախագծի 4-րդ հոդվածն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին, մասնավորապես «39[1] հոդվածի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «39.1-րդ հոդվածի» բառերով:

2) «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է. «Արգելվում է նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ»: Նկատի ունենալով հիշյալ հոդվածի պահանջը՝ որոշման նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 39.15-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «ՖՀՄՍ» հապավումն անհրաժեշտ է բացել:

8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերին:

««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

1. Օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Իրավական ակտում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված

կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանված են:

ՀՀ ԱՆ իրավական ակտերի
փորձաքննության գործակալության պետ՝ **Կ.ԽՏՐՅԱՆ**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

««Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 39.16-րդ հոդվածի 5-րդ մասում առկա է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կոռուպցիոն գործոն, որը դրսևորվում է որոշակի հանգամանքների առկայության դեպքում պաշտոնատար անձանց սեփական հայեցողությամբ գործելու անհարկի լայն հնարավորություն ընձեռելու միջոցով: Այդ առումով անհրաժեշտ է հստակ սահմանել բոլոր դեպքերը և չափանիշները, որոնք հաշվի առնելով պետք է առաջնորդվի Կենտրոնական բանկի խորհուրդը որոշումներ կայացնելիս:

««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ.ԽՏՐՅԱՆ**